# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094103-9Բ

ք. Երևան <<31>> 01. 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և <<Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ>> ՊՈԱԿ-ը, ի դեմս ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատար՝ Լ. Արզումանյանի, ով գործում է ինստիտուտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.4.1.03. բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում, սահմանված կարգի համաձայն, <<Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ>> ՊՈԱԿ-ում համապատասխան առաջադիմություն, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողներին կրթաթոշակի հատկացման գործընթացը:

### 2 .ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված աջակցությունը կազմում է՝ 16 358 500 (տասնվեց միլիոն երեք հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

### 3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

### 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### 5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանգիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 27-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ ա տ վ ի ր ա տ ու | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | <<Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ >> ՊՈԱԿ |
| ք. Երևան, Կառավարական 2 շենք | ք. Երևան, Ամիրյան 26 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Հ/Հ 900011034148 | Հ/Հ 900018001934 |
| Նախարարության գլխավոր | Ռեկտորի պաշտոնակատար՝ |
| քարտուղար՝---------- Ն.Հարությունյան | ---------- Լ. Արզումանյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |